ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 1. ՆՊԱՏԱԿ

Շահերի բախման քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակը Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) շահերը պաշտպանելն է այն դեպքերում, երբ վերջինս համարում է, որ այնպիսի գործարք կամ համաձայնագիր (այսուհետ՝ Գործարք) է կնքել, որտեղ իր աշխատողը, տնօրենը, պաշտոնատար անձը, Խորհրդի կոմից լիազորված հանձնաժողովի անդամը կամ որակազրկված անդամը (1986թ. ներքին եկամուտների օրենսգրքի՝ փոփոխությունները ներառյալ, 4958-րդ բաժնի իմաստով) կարող է անձնական օգուտ ունենալ կամ այն կարող է հանգեցնել հավելյալ օգուտով մեկ այլ գործարքի: Այս Քաղաքականությունը նպատակ ունի լրացնել, բայց ոչ փոխարինել ոչ առևտրային և բարեգործական կազմակերպությունների նկատմամբ կիրառվող շահերի բախումը կարգավորող դաշնային կամ նահանգային այլ օրենքները:: Աշխատողները, տնօրենները, պաշտոնատար անձինք, Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամները պարտավոր են լինել հավատարիմ և գործեն ՀԲԸՄ շահերին համահունչ: Ցանկացած ուղղակի կամ անուղղակի շահերի բախում ՀԲԸՄ-ի և աշխատողի, տնօրենի, պաշտոնատար անձի, Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամի միջև արգելված է, եթե նախապես չի հաստատվել Տնօրենների խորհրդի կամ համապատասխան հանձնաժողովի կոմոից:

Ցանկացած որոշում կհամարվի սույն Քաղաքականության խախտում, եթե աշխատողների, տնօրենների, պաշտոնատար անձանց կամ Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամի կողմից կայացվել է որոշում, որը կայացվել է կամ կարող է կայացվել մասնավոր շահադիտական նկատառումներից կամ երրորդ կողմի շահերից ելնելով:
Շահերի բախումից առաջացած ոչ պատշաճ վարքագծիի կամ անհավատարմության դրսևորումները կարող են հանգեցնել լուրջ հետևանքների ՀԲԸՄ-ի համար և պատճառ հանդիսանալ կարգապահական տույժի կամ աշխատանքային պայմանագրի լուծման կամ, Տնօրենների խորհրդից կամ համապատասխան հանձնաժողովից հեռացման:

ՀՈԴՎԱԾ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ա. Շահագրգիռ անձ. ՀԲԸՄ ցանկացած աշխատող, տնօրեն, պաշտոնատար անձ կամ Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամ, ով ունի ուղղակի կամ անուղղակի

Ֆինանսական շահ՝ ներքոնշյալ սահմանման համապատասխան, կամ հաղիսանում է որակազրկված անձ, ապա նա համարվում է Շահագրգիռ անձ։
Բ. Ֆինանսական շահ. Անձն ունի Ֆինանսական շահ, եթե ուղղակի կամ անուղղակի բիզնեսի, ներդրումների կամ ընտանիքի միջոցով ունի.
1. Սեփականության կամ ներդրումային շահ ցանկացած կազմակերպությունում, որի հետ ՀԲԸՄ-ն Գործարք է կատարում։
2. Փոխհատուցման համաձայնություն ՀԲԸՄ-ի հետ կամ մեկ այլ կազմակերպության կամ անհատի ում հետ ՀԲԸՄ-ն Գործարք է կատարել։
3. Հավանական սեփականության կամ ներդրումային շահ կամ փոխհատուցման համաձայնություն կազմակերպության կամ անհատի հետ, ում հետ ՀԲԸՄ-ն բանակցում է Գործարքի շուրջ կամ
4. Էական ֆինանսական շահ Գործարքում։

Փոխհատուցումը ներառում է ուղղակի կամ անուղղակի վարձատրություն, ինչպես նաև նվիրատվություն կամ օգնություն, որոնք ոչ էական չեն համարվում:
Ֆինանասական շահը անպայմանորեն չի ենթադրում շահերի բախում։ Սույն փաստաթղթի 3-րդ Հոդվածի «Բ» կետի համաձայն, անձը, որն ունի Ֆինանսական շահ կարող է ունենալ շահերի բախում միայն, եթե Տնօրենների խորհուրդը կամ համապատասխան հանձնաժողովը որոշում է, որ գոյություն ունի շահերի բախում։

ՀՈԴՎԱԾ 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

1. ՀԲԸՄ նախագահը, Տնօրենների խորհրդի կամ հանձնաժողովի նախագահը անհրաժեշտության դեպքում նշանակում են անձնական շահագրգռվածություն չունեցող անձի կամ հանձնաժողովի՝ ուսումնասիրելու առաջարկված Գործարքի այլընտրանքները։
2. Պատշաճ ջանադրություն գործադրելուց հետո, Տնօրենների խորհուրդը կամ հանձնաժողովը պետք է որոշեն՝ արդյոք ողջամիտ ջանքերի միջոցով ՀԲԸՄ-ն կարող է կատարել մեկ այլ ավելի ձեռնտու Գործարք ֆիզիկական անձի կամ կազմակերպության հետ, որը չի հանգեցնի շահերի բախման։
3.Եթե ավելի ձեռնտու Գործարքին հնարավոր չէ հասնել առանց շահերի բախման, Տնօրենների խորհուրդը կամ հանձնաժողովը անշահախնդիր տնօրենների մեծամասնության ձայնով ՝ անգամ եթե անշահախնդիր տնօրենների քանակը քվորում չի ապահովում, որոշում է՝ արդյոք Գործարքը բխում է ՀԲԸՄ շահերից և շահավետ է կազմակերպության համար, և արդյոք Գործարքը արդար և ողջամիտ է։ Վերոնշյալ սահմանման համաձայն, Տնօրենների խորհուրդը կորոշի՝ կնքել այդ Գործարքը, թե՝ ոչ։

Դ. Շահերի բախման քաղաքականության խախտումը

1. Եթե Տնօրենների խորհուրդը կամ հանձնաժողովն ունի ողջամիտ պատճառներ կարծելու, որ որևէ աշխատող, տնօրեն, պաշտոնատար անձ կամ Տնօրենների խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամ չի բացահայտել իրական կամ հավանական Ֆինանսական շահը, այն պետք տեղեկացնի տվյալ անձին նման կարծիքի հիմքերի մասին և հնարավորություն տա այդ անձին ենթադրյալ ձախողման վերաբերյալ բացատրությամբ հանդես գալու:
2. Եթե, տվյալ անձի բացատրությունը լսելուց և նման իրավիճակներում նախատեսված հետաքնությունից հետո, Տնօրենների խորհուրդը կամ հանձնաժողովը որոշում են, որ տվյալ անձը չի կարողացել բացահայտել փաստացի կամ ենթադրյալ շահերի բախումը, ապա այն պետք է ձեռնարկի համապատասխան կարգապահական կամ ուղղիչ միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնօրենների խորհրդի և վերջինիս լիազորած բոլոր հանձնաժողովների նիստերի արձանագրությունները պետք է պարունակեն հետևյալը.
Ա. Անձանց անունները, ովքեր բացահայտվել կամ այլ կերպ համարվել են իրական կամ հնարավոր շահերի բախման մեջ Ֆինանասական շահ ունեցող, Ֆինանսական շահի էությունը, ցանկացած գործողություն, որը կատարվել է բացահայտելու շահերի բախման առկայությունը և Տնօրենների խորհդրի կամ հանձնաժողովի որոշումը՝ կապված շահերի բախման փաստացի գոյութուն ունենալու մասին:
Բ. Գործարքի վերաբերյալ քննարկումներին և քվեարկությանը ներկա գտնվող անձանց անունները, քննարկման բովանդակությունը ՝ ներառյալ առաջարկված Գործարքի այլընտրանքները և ցանկացած քվեարկության արձանագրութունն, որը արվել է սույն ընթացակարգերի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 5. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Ա. Տնօրենը, որը ծառայությունների համար ստանում է փոխհատուցում ՀԲԸՄ-ից ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չպետք է մասնակցի քվեարկություններին, որոնք կապված են իր փոխատուցման հետ:
Բ. Ցանկացած հանձնաժողովի անդամ, որի իրավասությունը ներառում է փոխահատուցման հետ կապված հարցեր և որը ծառայությունների համար ստանում է

փոխհատուցում ՀԲԸՄ-ից ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չպետք է մասնակցի քվեարկություններին, որոնք կապված են իր փոխատուցման հետ:
Գ. Տնօրենների խորհրդի կամ ցանկացած հանձնաժողովի ոչ մի անդամի, որի իրավասությունը ներառում է փոխհատուցման հետ կապված հարցեր և որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանում է փոխհատուցում ՀԲԸՄ կողմից, չի արգելվում փոխհատուցման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել որևէ հանձնաժողովի:

ՀՈԴՎԱԾ 6. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանկացած աշխատող, տնօրեն, պաշտոնատար անձ կամ Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամ ամեն տարի ստորագրում է հայտարարություն, որը հաստատում է, որ տվյալ անձը.
Ա. Ստացել է շահերի բախման քաղաքականության օրինակը
Բ. Կարդացել և հասկացել է այդ քաղաքականությունը
Գ. Համաձայնվել է պահպանել քաղաքականությունը
Դ. Գիտակցում է, որ ՀԲԸՄ-ն բարեգործական կազմակերպություն է և որպեսզի պահպանի դաշնային հարկերից ազատված լինելու իրավունքը, այն պետք է հիմնականում զբաղվի այն գործունեությամբ, որն ուղղված է հարկերից ազատման ենթակա մեկ կամ մի քանի նպատակների իրականացմանը:

ՀՈԴՎԱԾ 7. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ՀԲԸՄ-ն բարեգործական և կրթական գործունեության ապահովման ու հարկերից ազատված լինելու կարգավիճակը չվտանգելու նպատակով Տնօրենների խորհուրդը իրականացնում է պարբերական ստուգումներ, որոնք առնվազն պետք է ներառեն հետևյալ հարցերը.
Ա. Արդյոք փոխհատուցման համաձայնությունները և արտոնությունները ողջամիտ են՝ հիմված իրավասու հետազոտությունից ստացած տվյալների վրա և անկախ կողմերի միջև բանակցությունների արդյունք են:
Բ. Արդյոք գործընկերային հարաբերությունները, համատեղ ձեռնարկումները և կառավարող կազմակերպությունների հետ պայմանավորվածությունները համապատասխանում են ՀԲԸՄ գրավոր քաղաքականություններին պատճաշ կերպով գրանցված են, արտացոլում են ապրանքների և ծառայությունների համար արված ողջամիտ ներդրումները կամ վճարումները, հետագա բարեգործական նպատակները և

չեն հանգեցնում արտոնության, անթույլատրելի մասնավոր օգուտների կամ հավելյալ օգուտով գործարքների:

ՀՈԴՎԱԾ 8. ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

7-րդ Հոդվածով նախատեսած պարբերական ստուգումներ իրականացնելիս՝ ՀԲԸՄ-ն կարող է, բայց պարտավոր չէ օգտվել արտաքին խորհրդատուների ծառայություններից: Արտաքին խորհրդատուների ծառայություններից օգտվելու դեպքում, նրանց ներգրավումը չի ազատում Տնօրենների խորհրդին պարբերական ստուգումների անցկացումն ապահովելու իր պատասխանատվությունից:

Ընդունված է 2016 թվականի օգոստոսի 8-ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ՏՆՕՐԵՆՆԵՐԻ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական բարգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ներքոստորագրյալ աշխատողը, տնօրենը, պաշտոնատար անձը, կամ Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամը սույնով հաստատում է, որ ա) ստացել է ՀԲԸՄ շահերի բախման քաղաքականության օրինակը բ) կարդացել ու հասկացել է այս քաղաքսկանությունը և համաձայնվել է պահպանել այն, գ) գիտակցում է, որ ՀԲԸՄ-ն բարեգործական կազմակերպություն է և որպեսզի պահպանվի դաշնային հարկերից ազատված լինելու իրավունքը, այն պետք է հիմնականում զբաղվի այն գործունեությամբ, որն ուղղված է հարկերից ազատման ենթակա մեկ կամ մի քանի նպատակների իրականացմանը:

ՀԲԸՄ ներքոստորգրյալ աշխատողը, տնօրենը, պաշտոնատար անձը, կամ Խորհրդի կողմից լիազորված հանձնաժողովի անդամը սույնով նաև հաստատում է, որ նա (խնդրում ենք ստուգել ստորև կիրառելի հայտարարությունը)՝

□ ունի Ֆինանսական շահ, որը կարող է հանգեցնել շահերի բախման

□ չունի Ֆինանսական շահ, որը կարող է հանգեցնել շահերի բախման:

(ստորագրություն)

Տպագիր անուն
Պաշտոն
Ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա
ՈՐԱԿԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

2013 թ.-ի նոյեմբերի 22-ի դրությամբ 1986 թ.-ի Ներքին եկամուտների օրենսգրքի՝ փոփոխությունները ներառյալ, 4958 (f) (1) բաժինը «որակազրկված անձ» եզրույթը սահմանում է, որ որևէ գործարքի առնչությամբ այն նշանակում է՝
ա) Ցանկացած անձ, որը նման գործարքի կնքման օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում եղել է այնպիսի պաշտոնում, որով էական ազդեցություն է ունեցել կազմակերպության գործերի վրա, բ) «ա» ենթակետում նկարագրված անձի ընտանիքի անդամ, գ) 35% սեփականությամբ կազմակերպություն, դ) ցանկացած անձ, որի նկարագիրը համապատասխանում է «ա» և «բ» ենթակետերում նկարագրված հատկանիշներին կամ «գ» ենթակետի հատկանիշներին՝ կապված 509(a)(3) բաժնում առկա կազմակերպությունների նկարագրի հետ, որը ստեղծված է ու գործում է բացառապես ի շահ հարկերից ազատված կազմակերպության և նրա նպատակներին, կատարում է նրա գործառույթները։
ե) գործարք, որը ներառում է դոնորի կողմից առաջարկված հիմնադրամ (4966(d)(2) բաժնի սահմանման համապատասխան), ցանկացած անձ՝ նկարագրված՝ դոնորի կողմից առաջարկված հիմնադրամի (ինչպես որ սահմանված է) վերաբերյալ 7-րդ կետում և,

զ) գործարք, որը ներառում է հովանավոր կազմակերպության (4966(d)(1) բաժնի սահմանման համապատասխան) և ցանկացած անձ, ով ունի 8-րդ կետում՝ հովանավոր կազմակեպության (ինչպես որ սահմանված է) վերաբերյալ սահմանման հատկանիշները։